

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/4

14 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լուսինե Ազարյանի 17.06.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշման դեմ:

Ա/Ձ Լուսինե Ազարյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Լուսինե Ազարյանը (այսուհետ նաև գանգատաբեր) տեղեկացնում է, որ Մաշտոցի հարկային տեսչությունից ստացված 30.03.2015թ-ի թիվ 257/2015 արձանագրության համաձայն հրավիրվել է տեսչություն ճշտված հաշվետվություն ներկայացնելու համար, որը գրավոր ձևով առարկվել է:

Ա/Ձ Լուսինե Ազարյանը գրանցվել և հաշվառվել է Մաշտոցի հարկային տեսչությունում 2008 թ-ի փետրվարի 14-ին, որը զբաղվում է մշակույթային (երաժշտական) գործունեությամբ:

Ինչ վերաբերվում է «Արարտիվենտոս» ՍՊԸ-ի գործունեությանը, ապա այն գրանցվել է և հաշվառվել է Մաշտոցի հարկային տեսչությունում 2012 թ-ի ապրիլի 13-ից, որտեղ գանգատաբերը ունեցել է 50% մասնաբաժին: Ընկերությունը գրանցումից մինչև լուծարումն (լուծարվել է 20.06.2013թ.) ընկած ժամանակահատվածում, գործունեություն չի իրականացրել:

Միաժամանակ Գանգատաբերը հարկ է համարում նշել, որ թեև երկու տնտեսվարող սուբյեկտները հաշվառված լինելով Մաշտոցի հարկային տեսչությունում, սակայն այդ երեք տարիների ընթացքում երբևէ թե բանավոր և թե գրավոր կարգով իրեն չի տեղեկացվել ճշտված հաշվետվություն ներկայացնելու և ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Գանգատաբերը տեղեկացնում է, որ արձանագրությունը առարկելուց հետո ստացել է Մաշտոցի հարկային տեսչության պետի ժ/պ 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշումը, որով որոշվել է իրենից գանձել 2.136.081 դրամ պարտավորության գումար, որից ապառք 838501 դրամ, տույժ 459079 դրամ և տուգանք 838501 դրամ:

Գանգատաբերը կրկին անգամ նշում է, որ երբևիցե տեղեկացված չի եղել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, նշված ընկերությունով գործունեություն երբևիցե չի իրականացվել, ապառքներ չի ունեցել և համարվել է բարեխիղճ հարկատու:

Ա/Ձ Լուսինե Ազարյանի 2013 թ-ի տարեկան շրջանառությունը կազմել է հինգ միլիոն դրամ, որը եղել են հիմնականում իր հոնորարները: Ըստ երևույթին տեսչությունն իր անհիմն որոշումն ընդունելու համար դա է հիմք համարել երեք տարի անց կամերալ ուսումնասիրության արդյունքում ստիպելու վճարել նախնական հաշվարկված գումարը, որի հնարավորությունը գանգատաբերը բացարձակապես չունի, քանի որ հանդիսանում է երկու երեխաների միայնակ մայր և գործունեությունից վաստակած չնչին գումարները երեխաների ապրուստի միակ միջոցն են:

Գանգատաբերը նշում է, որ դասական ոճի երգչուհի է, Վիենայի կամերային օպերային թատրոնի մեներգչուհի, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայի դասախոս: Բազմիցս մասնակցել և մասնակցում է կառավարական համերգներին,

բարեգործական համերգներին կարիքավոր մանուկներին և հաշմանդամներին օգնելու համար:

Գանգատաբերը խնդրում է արդարությունը վերականգնելու համար չեղյալ համարել Մաշտոցի հարկային տեսչության որոշումն իրենից չհիմնավորված ձևով հաշվարկված 2.136.081 դրամ գումար գանձելու վերաբերյալ:

«ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի ժ/պ-ն, քննարկելով Ա/Ձ Լուսինե Ազարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 07.05.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 2.136.081 դրամ, որից ապառք 838501 դրամ, տույժ 459079 դրամ և տուգանք 838501 դրամ: Պարտավորությունը առաջացել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի և «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքերով կատարված նախնական հաշվարկի հիման վրա:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի ժ/պ կողմից 08.05.2015 թ-ին ընդունվել է թիվ 1316 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Լուսինե Ազարյանից 2.136.081 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Որոշմամբ Ա/Ձ Լուսինե Ազարյանից 2.136.081 դրամ պարտավորության գումար գանձելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 30.03.2015 թ-ի Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների խախտումների վերաբերյալ թիվ 257/2015 արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն), որով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Ձ Լուսինե Ազարյանը «Արարտիվետոս» ՍՊԸ-ում հանդիսացել է հիմնադիր և համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 2013 թ-ին համարվում է ԱԱՀ վճարող: Արձանագրությամբ Ա/Ձ Լուսինե Ազարյանին առաջարկվել է ներկայացնել ճշտված հաշվետվություններ, իսկ համաձայն չլինելու դեպքում՝ գրավոր առարկություններ:

Համաձայն չլինելով Արձանագրության հետ Ա/Ձ Լուսինե Ազարյանի կողմից ներկայացվել են գրավոր առարկություններ: Արդյունքում, ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ կողմից 07.05.2015 թ-ին կազմվել է Ա/Ձ Լուսինե Ազարյանի հարկային պարտավորությունների վերաբերյալ նախնական հաշվարկը, որով արձանագրված պարտավորությունները հիմք են ընդունվել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի ժ/պ 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշմամբ գանձման առաջադրելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի ժ/պ 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշմամբ պարտավորությունները գանձման են առաջադրվել ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ հիմնավորմամբ:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 4-րդ ենթակետի համաձայն. «Սույն հոդվածով նախատեսված

ուսումնասիրությունների ընթացքում լրացուցիչ հարկերի և հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորություններ չեն առաջանում, բացառությամբ՝

1) սույն կետի հինգերորդ պարբերությանը համապատասխան՝ կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների արդյունքում հարկային մարմնի հայտնաբերած խախտումները տնտեսավարող սուբյեկտի կողմից ընդունվելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացվելու, ինչպես նաև սույն կետի վեցերորդ պարբերությանը համապատասխան կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում խախտումներ հայտնաբերելու ու ստուգման ակտով հարկային պարտավորությունների վերահաշվարկման դեպքերի.»::

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (անհատ ձեռնակատեր կամ իրավաբանական անձ) հարկային պարտավորություններ կարող են առաջադրվել կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների արդյունքում հարկային մարմնի հայտնաբերած խախտումները տնտեսավարող սուբյեկտի կողմից ընդունվելու և ճշգրտված հաշվետվություններ ներկայացվելու, ինչպես նաև իրականացված ստուգումների արդյունքում:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ 30.03.2015 թ-ի Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների խախտումների վերաբերյալ թիվ 257/2015 արածանագրությամբ արձանագրած խախտումները Ա/Ձ Լուսինե Ազարյանի կողմից չեն ընդունվել և ճշգրտված հաշվետվություններ չեն ներկայացվել: Հետևապես, Ա/Ձ Լուսինե Ազարյանի մոտ ավելացված արժեքի հարկի մասով պարտավորություններ կարող էին առաջանալ բացառապես իրականացված ստուգման արդյունքում կազմված ակտով: Այսինքն, ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշմամբ Ա/Ձ Լուսինե Ազարյանից 2.136.081 դրամ ԱԱՀ-ի գումար գանձելու համար նշված պարտավորությունները նախ պետք է սահմանված կարգով առաջադրվեին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Լուսինե Ազարյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 08.05.2015 թ-ի թիվ 1316 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

